

# ՍԱՂՄՈՍ 104

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ հոգածու- թյունը Իր ամբողջ գործերի վրա <u>MT ներածություն</u> <u>Տկա</u>	Փառք գերիշխան ՏԻՐՈՋԸ Իր ստեղծագործության և հոգատարության համար	Օրհներգ Արարիչ Աստծուն	Փառաբանություն Արարչին	Արարչագործության փառքերը
104:1-4	104:1-2  104:3-4	104:1-4	104:1-4	104:1-2ա  104:2բ-4
104:5-9	104:5-9	104:5-9	104:5-9	104:5-6  104:7-9
104:10-13	104:10-13	104:10-13	104:10-12  104:13-15	104:10-12  104:13-15
104:14-17	104:14-18	104:14-23	  104:16-18	  104:16-18
104:18-23	  104:19-23		  104:19-23	  104:19-21  104:22-23
104:24-26	104:24-26	104:24-26	104:24-26	104:24  104:25-26
104:27-30	104:27-30	104:27-30	104:27-30	104:27-28  104:29-30
104:31-35	104:31-32  104:33-35բ  104:35գ-դ	104:31-35	104:31-32  104:33-35բ  104:35գ-դ	104:31-32  104:33-35բ  104:35գ

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**  
*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի

ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ակնհայտ է, որ Սաղմոս 103 և 104 ձևավորում են աստվածաբանական զույգ: Սա անսովոր է Սաղմոսների համար: Սա կարելի է տեսնել, քանի որ բացման և փակման խոսքերը ճիշտ նույնն են («օրհներ», *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Աստվածաբանական այս զույգի կարևորությունը հնարավոր է կայանում է այս Սաղմոսների երկու ընդհանուր թեմաներում՝

1. Սաղմոս 103-ը ՅԱՀՎԵԻ սիրո ուխտն է որպես Փրկիչ
2. Սաղմոս 104 ցույց է տալիս Աստծուն (*Էլոհիմ*) որպես Արարիչ, Հոգացող և Պահապան: Հրեաներն ասում են, որ Սաղմոս 103 նկարագրում է ՅԱՀՎԵԻԻ Իր ուխտի ողորմության մեջ, իսկ Սաղմոս 104 նկարագրում է *Էլոհիմին* որպես Արարիչ: Սա շատ ավելի լավ է բացատրում այս տերմինները, քան այն ինչ տեսնում ենք JEDP տեսության մեջ, որպես քննադատության աղբյուր, որը շատ հայտնի էր 19-րդ դարում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ, Դ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՆԳԱՄԱՏՅԱՆԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բ. Այս Սաղմոսը շատ նման է եգիպտական *Աթոնին* ուղղված մի երգի (ANET 369-371), Ախենատեն IV-ի կողմից (Ք. Ա. 1375-1357): Չնայած որ նմանություն կա, առկա են նաև ակնհայտ տարբերություններ: Մենք գիտենք, որ Իմաստասիրական Գրականությունը ՆՄԱ-ի շատ մշակույթներում տարածված էր, և հնարավոր է դիտավորյալ փոխառություն լինի եգիպտական արևի աստծուն նվիրված երգի և Սաղմոս 103 և 104-ում Արարիչ Փրկիչ Աստծուն նվիրված երգերի միջև:

ՀՄԱ-ի զուգահեռների համար տես՝

1. IVP *Աստվածաշնչյան Հիմունքների Մեկնություն*, էջ՝ 548-550
2. *Աստվածաշնչի խոսքերը*, էջ՝ 277-278
3. *Աստվածաշնչի դժվարությունների հանրագիտարան*, էջ՝ 239-240
4. *Հնագույն Մերձավոր Արևելյան մտածողությունը և ՀԿ-ը. երբայերեն Աստվածաշնչի հայեցակարգային աշխարհի ներկայացում*, էջ՝ 165-199

Գ. Ինչ-որ առումով տարօրինակ է, որ Աստծո գիտակից ստեղծագործությունը (տես՝ Փիլ. 2:10), թե՛ հրեշտակները և թե՛ մարդիկ, ինչ-որ տեղ չեն շեշտադրվում Սաղմոս 104-ում: Իրականում Սաղմոս 104:4-ի երբայերեն տեքստը կարծես թե նկատի է ունենում բնության տարրերին և ոչ թե հրեշտակային աշխարհը: Մարդկությունը կարճ ակնարկվում է Սաղմոս 104:14-ում և 23-ում, սակայն հպանցիկ և ոչ թե որպես կարևոր կետ:

Դ. Այս Սաղմոսը կարծես թե արտացոլում է Ծննդոց 1-ին գլուխը՝

1. Օր 1, Ծննդ. 1:1, երկինքները – Սաղմ. 104:1-4
2. Օր 2-3, Ծննդ. 1:6-9, ցամաքը – Սաղմ. 104:5-9
3. Օր 3, Ծննդ. 1:10-17, կերակուր և ջուր – Սաղմ. 104:13-17
4. Օր 4, Ծննդ. 1:14-19, արև և լուսին – Սաղմ. 104:19-23
5. Օր 5, Ծննդ. 1:20-23, թռչուններն ու ձկները – Սաղմ. 104:24-26
6. Օր 6, Ծննդ. 1:24-26, կենդանիներն ու մարդիկ – (տես՝ վերևում կետ Գ.)
7. Օր 6, Ծննդ. 1:29-31, Աստծո հոգածությունը – Սաղմ. 104:27-30

8. Օր 7, Ծննդ. 2:1-3, հանգստի օրը – Սաղմ. 104:31-34
9. 7-րդ օրից հետո (այսինքն՝ Ծննդոց 3-ի անկումը) – Սաղմ. 104:35

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:1-4

<sup>1</sup>Օրհնի՛ր ՏԻՐՈՉԸ, ո՛վ իմ անձ:

Ո՛վ ՏԵՐ, իմ Աստված, Դու խիստ մեծ ես .

Փառք ու մեծափառություն ես հազած .

<sup>2</sup>Լույսը հանդերձի պես ես հազնում,

Երկինքը տարածում ես վարագույրի պես:

<sup>3</sup>Նա իր վերնատների գերանները ջրերի վրա է հիմնում,

Ամպերն իրեն կառք է դարձնում, շրջում է քամու թևերի վրա:

<sup>4</sup>Իր հրեշտակներին հոգիներ է դարձնում

Իր սպասավորներին՝ կրակի բոց:

**104:1** «Օրհնի՛ր ՏԻՐՈՉԸ, ո՛վ իմ անձ» Այսպես են սկսում և ավարտվում Սաղմոս 103 և 104-ը (այսինքն՝ *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ): Սա փառաբանություն է ՅԱՀՎԵԻՆ Իր ամենաբարձր ստեղծագործության ամբողջ ելությունից (մարդիկ, տես՝ Ծննդ. 1:26-27):

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *NEPHESH*

❖ «Ո՛վ ՏԵՐ, իմ Աստված, Դու . . . ես» Սաղմոս 104 ունի երկու ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ, որոնք նկարագրում են Աստծուն (բառացի՝ Ո՛վ ՅԱՀՎԵ, իմ *Eynush*), որին հետևում են յոթ ԴԵՐԲԱՅՆԵՐ, որոնք նկարագրում են Նրա գործողությունները:

1. Դու խիստ մեծ ես – BDB 152, KB 178, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 2 Օր. 3:24, 2 Թագ. 7:22, 1 Մնաց. 16:25, Սաղմ. 35:27, 40:16, 48:1, 70:4, 86:10, 96:4, 145:3, Սաղ. 1:5
2. Դու հազել ես – BDB 527, KB 519, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ  
ա. փառք (BDB 217, Հոբ 40:10, Սաղմ. 96:6)  
բ. մեծափառություն (BDB 214, Սաղմ. 93:1)

Սաղմոս 104:2-4 թվարկում է երկնային տիրույթում սկզբնական ստեղծագործության ընթացքում Նրա գործերը:

1. Նա իրեն ծածկում է լույսով – BDB 741, KB 813, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 36:9, Դան. 2:22, 1 Տիմ. 6:16, Հակ. 1:17, 1 Հովհ. 1:5
2. Նա տարածում է երկինքը – BDB 639, KB 692, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Հոբ 9:8, 37:18, Ես. 40:22, 42:5, 45:12, Երեմ. 10:12, Չաք. 12:1, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ
3. Նա իր վերնատների գերաններն է հիմնում – BDB 900, KB 1138, *Piel* ԴԵՐԲԱՅ
4. Նա ամպերն իրեն կառք է դարձնում – BDB 962, KB 1321, *Qal* ԴԵՐԲԱՅ
5. Նա շրջում է քամու թևերի վրա – BDB 229, KB 246, *Piel* ԴԵՐԲԱՅ, տես՝ 2 Թագ. 22:11, Սաղմ. 18:10
6. Նա քամուն Իր պատգամաբերն է դարձնում – BDB 793, KB 889, *Qal* ԴԵՐԲԱՅ (այսինքն՝ հրեշտակներին, տես՝ Եբր. 1:7):
7. Իր սպասավորներին դարձնում է կրակի բոց – ԲԱՅԸ #6  
ա. կրակի բոց – BDB 529, KB 521, *Qal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 148:8  
բ. սպասավորներ – BDB 1058, KB 1661, *Piel* ԴԵՐԲԱՅ

**104:2** «Լույսը հանդերձի պես ես հազնում» Քանի որ Սաղմոսներում այլ տեղ ակնարկը Ծննդոց 1-ին է վերաբերում, մենք կամենում ենք սա դիտարկել որպես թե Ծննդ. 1:3-5-ին նկատի ունեցող

համար, սակայն ուշադրություն դարձրեք, որ Աստված է նկարագրվում, որպես լույսով ծածկված, այլ ոչ թե անձն ու դատարկ երկիրը:

Լույսը ճշմարտության, բժշկության, հայտնության և բարության մասին պարբերաբար կրկնվող թեմա է: Աստված հագնում է լույսը և խոսում է այն մեր աշխարհից ներս:

❖ **«վարագույրի պես»** Սա հնագույն Մերձավոր Արևելքում տարածված հասկացություն է (տես՝ Ես. 42:5, Հոր 9:8, Սաղմ. 104:)2, Երեմ. 10:12, 51:15, Չաք. 12:1: Եգիպտական *Մեռյալների Գրքում* երկինքը նկարագրվում է որպես «կեղև»: Ռիգ Վեդայում երկինքը նկարագրվում է որպես «ծածկոցի պես սփռված»: Սա պարզապես երկրագնդից վերև երկնականարի մասին նկարագրություն է (այսինքն՝ այս մոլորակի մթնոլորտը):

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿՐԱԳՆԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ (այսինքն՝ գմբեթ, կամար, կեղև)

**104:3ա** Սա խոսում է երկրի հիմնաքարերի վրա նստած պյունների մասին (տես՝ Սաղմ. 24:2, 104:5, Հոր 38:4), որոնց վրա հանգչում են (տես՝ Ամոս 9:6) երկինքները (այսինքն՝ մթնոլորտը, որտեղ ամբարվում է խոնավությունը):

Այնուհանդերձ, այս համարը կարող է նաև վերաբերել այն պյուններին, որոնք հիմնված են երկինքների ջրերի վրա (այսինքն՝ մթնոլորտը, տես՝ Ծննդ. 1:7): Նկարագրությունը անորոշ է, և չպետք է բառացիորեն հասկանալ: Խնդրում եմ կարդացեք իմ մեկնությունները Ծննդոց 1-11 գլուխների շուրջ, Ծննդոց 1-11- ժանրը՝ [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org) կայքում:

Այս մասում, որտեղ քննարկվում է ՅԱՀՎԵԻ կողմից մթնոլորտի ջրերից վեր Իր պալատը՝ տաճարը կառուցելը, կուզեի նշել մի նոր գրքի մասին, որը գրել է Ջոն Ուոլթերը *Ծննդոց Մեկի Կորսված Աշխարհը . Հնագույն տիեզերաբանություն*, որը շատ օգտակար եղավ ինձ Ծննդոց 1-ին գլուխը մեկնաբանելիս: Նա պնդում է, որ Ծննդոց 1-ը ՀՄԱ արձանագրություն է ՅԱՀՎԵԻ մասին, որը կառուցում է Իր տիեզերական տաճարը (տես՝ Եբր. 8:2,5, 9:23-24): Կարծում եմ այս տեքստը նույնպես այդ մասին է վկայում:

AB առաջարկում է կապ ԲԱՅԻ (BDB 900, KB 1138) և «վերնատան» (էջ՝ 34) միջև, և այս տողը թարգմանում է որպես «նա իր վերնատները ջրերով է ամբարում»: Նկատեք Հոր 37:9 որպես հավանական գուգահեռ (այսինքն՝ «վերնատուն») նաև նկատեք Հոր 38:22:

❖ **«ամպերն Իրեն կառք է դարձնում»** Սեպտուագիան սա վերագրում է հրեշտակային հոգիներին (այսինքն՝ Զերովբեները, Սաղմ. 18:10) և սրան հետևում է Եբր. 1:7 համարը, սակայն համատեքստում Եբրայերեն լեզուն գրեթե պահանջում է, որ սրանք պարզապես բնական տարրեր են, որոնք Աստված օգտագործում է և վերահսկում Իր սեփական նպատակների համար (տես՝ Ես. 19:1):

«Քամի» բառը (անգլերենում) եբրայերեն ու հունարեն լեզուներում կարող է վերաբերել «քամուն», «շնչին» կամ «հոգուն»:

Ամպերը աստվածության տեղափոխման ավանդական միջոցն են (տես՝ Դան. 7:13, Մատթ. 24:30, 26:64, Գործք 1:9-11, Հայտն. 1:7): Այս պատկերը հիշեցնում է ՀԿ-յան ելիցի փորձառության մեջ *Շեխինայի* ամպը (տես՝ Ելից 13:21,22, 14:19,20,24, 16:10, 19:9,16, 24:15,16, 18, 34:5, 40:34-38), որը խորհրդապատկերում է Աստծո ներկայությունն Իր ժողովրդի հետ:

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՇՈՒՆՉ, ՔԱՄԻ, ՀՈԳԻ

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . SHEKHINA

❖ **«Շրջում է քամու թևերի վրա»** Տես Սաղմոս 18:10-ի գրառումը:

**104:4** Ֆիզիկական ստեղծագործությունը (այսինքն՝ քամին և կրակը, տես՝ Սաղմ. 148:8) ՅԱՀՎԵԻ ծառան է (տես՝ LXX, մեջբերված Եբր. 1:7-ում, անձնավորված է ֆիզիկական կողմերը որպես ծառաներ, այսինքն՝ Ուգարտական դիցաբանություն): Այս համարը, ըստ համատեքստի, նկատի չունի «բնական հայտնությունը» (տես՝ Սաղմ. 19:1-6), այլ ՅԱՀՎԵԻ մտերմությունը Իր ֆիզիկական

ստեղծագործության հետ, հատկապես այս մոլորակի: Մ.Ս. Լյուիսը երկիրը անվանում է «հպված մոլորակ»:

ՍԵՍ *ձեռնարկը* (Էջ՝ 879) տալիս է այս մոլորակի շերտերի մասին հնագույն երրայական տեսարանի գեղեցիկ պատկերավոր նկարագրություն:

1. վերը երկինքը (Աստծո բնակատեղին)
2. երկնականարի վրայի ջրերը
3. հաստատությունը (ցամաք երկնականարը իր պատուհաններով, տես՝ Սաղմ. 78:23, Մաղ. 3:10)
4. մթնոլորտը (ամպեր, թռչուններ)
5. սյուները, որոնք պահում են երկինքները (տես՝ Սաղմ. 104:3)
6. երկիրը (տափակ)
7. երկրի հիմքերը հաստատված անդունդի մեջ (տես՝ 1 Թագ. 2:8, Մաղմ. 75:3)
8. *Շեղ-ը* երկրի խորքում

Տես Համատեքստային Հասկացություններ Բ. 4

❖ «կրակ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:5-9**

<sup>5</sup>Նա երկրի հիմքերը հաստատեց,  
Որպեսզի հավիտյանս հավիտենից չսասանվի:  
<sup>6</sup>Այն անդնդով ծածկեցիր ինչպես հանդերձով.  
Ջրերը լեռների վրա կանգնեցին:  
<sup>7</sup>Փախան Քո սաստելուց,  
Քո որոտման ձայնից հապշտապ ետ քաշվեցին:  
<sup>8</sup>Լեռները բարձրացան ու հովիտներով իջան այնտեղ,  
Որ Դու հիմնել ես նրանց համար:  
<sup>9</sup>Սահման դրեցիր, որպեսզի չանցնեն  
Ու չծածկեն երկիրը նորից:

**104:5-9** Ծննդոց 1-ում միակ բանը, որ Աստված խոսքով գոյության չկոչեց «ջուրն» էր: Այս պարբերությունը նկարագրում է (ինչպես Սաղմ. 104:3) Նրա վերահսկողությունը ջրի վրա (տես՝ Ծննդ. 1:6-8՝ վերը գտնվող ջրերը, Ծննդ. 1:9-10՝ վարը գտնվող ջրերը): Հոր 38:8-11 կազմում է աստվածաբանական զուգահեռ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

**104:5** Աստծո ստեղծած կարգուկանոնը ապահով է (տես՝ 1 Մնաց. 16:30, Սաղմ. 24:1-2, 2 Տիմ. 2:19, Եբր. 11:10):

Այս նույն տեսարանը օգտագործվում է Մեսիայի Գալուստի համար (այսինքն՝ Անկյունաքարը, տես՝ 1 Կորնթ. 3:11, Եփես. 2:20, 1 Պետ. 2:6-8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԿՅՈՒՆԱԶԱՐ

❖ «որպեսզի հավիտյանս հավիտենից չսասանվի» Չնայած Սաղմ. 102:25-26 խոսում է աշխարհի անցնելու մասին (տես՝ Մատթ. 5:18, 24:35, 2 Պետ. 3:10), երկիրը նույնպես օգտագործվում է որպես կայունության սիմվոլ (տես՝ Սաղմ. 78:69, 93:1, 96:10, Ժող. 1:4): «Երկինքները և երկիրը» պարբերաբար կիրառվում են որպես երկու մշտական վկաներ (տես՝ 2 Օրինաց 4:26, 30:19, 31:28, 32:1):

**104:6** Պոեզիայի այս տողը հաստատում է, որ ջուրը ծածկել էր երկիրը Աստծո արտաբերված խոսքով ստեղծագործելու մեկնարկի ժամանակ (տես՝ Ծննդ. 1:2, Սաղմ. 33:6-7, Առակ. 3:19-20, 8:24-25, 27-28): Ծննդոցի ամփոփագիրը նկարագրում է, թե ինչպես է Աստված առանձնացնում երևույթները (խավարն ու լույսը, ջուրն ու ցամաքը, աղի ջրերը քաղցրահամ ջրերից) և ինչի համար են դրանք նախատեսված՝ իրենց ներսում և իրենցից դուրս, որպեսզի շարունակվեն և զարգանան ժամանակի մեջ:

❖ **«անդունդ»** Այս տերմինը անձնավորված է մի քանի ՆՄԱ ստեղծագործությանը վերաբերող առասպելներում՝ ցույց տալու սկզբնական ստեղծագործության քառույթ: Սակայն թե՛ Ծննդոց 1-ում և թե՛ Սաղմոս 104:6-ում Աստված է վերահսկում ջրային քառույթը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ): Այն առանձին, անկախ միավոր չէ, այլ գտնվում է Աստծո վերահսկողության ներքո: Չնայած որ այս Սաղմոսում առկա են մի քանի տերմիններ, որոնք կապված են հնագույն դիցաբանության հետ, Սաղմոսը հեռացրել է այդ բոլոր հնագույն առասպելական անձնավորումները այս տերմիններից (տես՝ Սաղմ. 74:12-17): Տես Ծննդոցի Ներածությունը առցանց՝ [www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org) :

**104:7 «Քո սաստելուց»** ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 172) նկատի ունի բանավոր հրամանը կամ խոսքը: Սա ՀԿ-ում երեք դեպքերում է կիրառվում՝

1. սկզբնական ստեղծագործության ժամանակ – Սաղմ. 18:13, 15, Եսայի 50:2 (այսինքն՝ Ծննդ. 1:9-10)
2. Ելիցի ժամանակ Կարմիր Ծովը կիսելիս – Սաղմ. 78:13, 106:9
3. դատաստանի աստվածահայտնությունը (չհատակեցված ժամանակ) – Սաղմ. 9:5, 11, 9:21, Եսայի 17:13

Նկատել, որ «որոտը» (BDB 947) համագոր է (տես՝ Հոր 26:14, 37:4-5, Սաղմ. 18:13, 29:3):

Որոտը կիրառվում է Հայտնության գրքում, երբ Հովհաննեսը նկարագրում է՝

1. չորս կենդանիների ձայնը, Հայտն. 6:1
2. մի հզոր հրեշտակի ձայն, Հայտն. 14:2
3. մեծ բազմության ձայնը, Հայտն. 19:6

❖ **«փախան Քո սաստելուց»** Սա խոսում է Աստծո կողմից ասված խոսքի գործության մասին (տես՝ Ծննդոց 1, Եսայի 55:11, Եբր. 1:3): Այն նաև ցույց է տալիս, որ Նրա Խոսքը, ոչ միայն գոյության են կոչում ինչ-որ բաներ, այլ դրանք ձևավորվում և կազմավորվում են Իր խոսքի միջոցով անգամ սկզբնական ստեղծագործությունից հետո:

❖ **«Ք որոտման ձայնից հապշտապ ես քաշվեցին»** Սա կարծես թե մեզ հիշեցնում է Ելիցի դեպքը, երբ Աստծո ձայնը բնութագրվում է որպես որոտմունք՝ Սինա լեռան վրա Օրենքը տալու ժամանակ (տես՝ Ելից 19:10-19):

**104:8-9 «այնտեղ, որ Գու հիմնել ես նրանց համար»** Այս երկու համարները ցույց են տալիս, որ Աստված է Իր ստեղծագործության վրա վերահսկում: Գոյություն ունի ծրագիր, որին հետևում է արարչագործությունը: Այս հիմնական աշխարհայացքը հիմք է հանդիսանում արևմտյան, գիտական կողմնորոշման համար: Գոյություն ունի բնական կարգուկանոն, որը կարելի է տեսնել ստեղծագործության մեջ Աստծո ստեղծող և պահպանող ձեռքի շնորհիվ: Այս գործող, սուրբգրային անձնավորումը պնդում է, որ Աստված ներգրավված է իր ստեղծագործության ամեն պահի մեջ:

**104:9** Աստվածաշունչն ունի շատ հատվածներ ՅԱՀՎԵԻ մասին, Ով վերահսկում և մշտապես սահմաններ է դնում ծովերի, գետերի և լճերի համար (տես՝ Հոր 38:8-11, Սաղմ. 74:15, Առակ. 8:29, Երեմ. 5:22): Ջուրը, իր կործանարար գործությամբ հանդերձ, սանձվում է (այսինքն՝ Եսայի 43:2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:10-13**

**<sup>10</sup>Հովիտների մեջ աղբյուրներ է բխեցնում,  
Որոնք լեռների միջից են հոսում:  
<sup>11</sup>Դրանք ջուր են տալիս դաշտի բոլոր գագաններին,  
Ու վայրի էշերն իրենց ծարավն են հագեցնում:  
<sup>12</sup>Նրանց մոտ երկնքի թռչուններն են բնակվում,  
Որոնք երգում են ճյուղերի միջից:  
<sup>13</sup>Նա Իր օթևաններից լեռներն է ջրում .  
Քո գործերի պտղով կշատանում է երկիրը:**

**104:10-17** Ստեղծագործության երրորդ օրն այս Սաղմոսում ընդլայնված է: Դա բուսականության ստեղծման և ոռոգվելու օրն էր, որը մարդկանց և կենդանիների համար ուտելիք էր դառնալու (տես՝ Հոբ 38:39-41):

1. վայրի գագանները քննարկվելու են Սաղմ. 104:10-13-ում
2. տնային կենդանիները՝ Սաղմ. 104:14-ում
3. մարդկությունը՝ Սաղմ. 104:14-15-ում

Ուշադրություն դարձրեք պարբերաբար կիրառվող ԴԵՐԲԱՅՆԵՐԻՆ, որոնք ցույց են տալիս աստվածային գործունեությունը (տես՝ Սաղմ. 104:2,3,4,10,13,14):

Կերակուրի առատությունը ցույց է տալիս Գևտ. 26:1-13, 2 Օր. 28:1-13, Սաղմ. 1:2-3-ի իրականացումը: Այս նպատակով է ստեղծվել ամբողջ արարչագործությունը և այսպիսին էր նախքան Անկումը: Սա Հայտնություն 21-22 տեսարանն է (այսինքն՝ երկինքը որպես նոր Եդեմ):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:14-17**

**<sup>14</sup>Նա անասունների համար խոտ է բուսցնում  
Ու մարդու ծառայության համար՝ բույս,  
Որպեսզի կերակուր հանի երկրից:  
<sup>15</sup>Ու գինի, որ ուրախացնում է մարդու սիրտը,  
Եվ յուղ, որ նրա երեսը փայլեցնի,  
Ու հաց, որ զորացնի մարդու սիրտը:  
<sup>16</sup>ՏԻՐՈՋ ծառերն ավիշով լի են,  
Լիբանանի մայրիները, որ Ինքն է տնկել:  
<sup>17</sup>Այնտեղ թռչուններն իրենց բներն են շինում,  
Իսկ արագիլի բնակարանը մշտադալար ծառերի վրա է:**

**104:14** «մարդու ծառայության համար՝ բույս» Հետաքրքիր է նշել, որ մարդկությունը պետք է աշխատեր թե՛ անկումից առաջ և թե՛ հետո (տես՝ Ծննդ. 2:15 և 3:17-19):

**104:15** «գինի, որ ուրախացնում է մարդու սիրտը» Գինին դիտարկվում է Աստծո պարգևների ցանկում: Աստվածաշունչը չի դատապարտում գինին, այլ գինու չարաշահումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԼԿՈՀՈԼԸ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ

❖ «որ նրա երեսը փայլեցնի» «Փայլեցնել» (BDB 843 II, KB 1007 II) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: Այն վերաբերում է ձիթայուղին, որն օգտագործվում էր հնում մարդկանց կողմից որպես կոսմետիկա: Տոնական օրերին պատրաստության ժամանակ այդ յուղով խնամում էին դեմքն ու ձեռքերը (տես՝ Սաղմ. 23:5, 45:7, 92:10, Ժող. 9:8, Դուկաս 7:46):

**104:17-18** Չնայած որ դրանք հանդիպում են պոեմի տարբեր տներում (ըստ NASB-ի), դրանք երկուսն էլ կարծես թե բնութագրում են տների տեսակներ, որոնք Աստված պատրաստել է

կենդանիների համար: Այս Սաղմոսը խոսում է կենդանական աշխարհի համար Աստծո հոգածության և մատակարարման մասին (տես՝ Հովնան 4:10, Հոր 39-41):

**104:17**

**NASB, NKJV, NRSV, TEV**

**NJB**

**REB**

**Peshitta**

**LXX**

«եղևներ»

«ամենաբարձր նյութերի վրա»

«ծայրերին»

«կիպարիսների մեջ»

«առաջնորդում է նրանց»

MT տալիս է «եղևների մեջ» (BDB 141): Մի քանի ուղղումներ են առաջարկվել՝

1. מִשׁוֹרֵר - եղևնու/կիպարիսի/գիհու ծառերի մեջ
2. מִשְׂרָר - ծայրին
3. מִשְׂרָר - գլուխների վրա

UBS տեքստային նախագիծը՝ էջ 378, տալիս է #2 “C” գնահատական, որը նշանակում է, որ կոմիտեն չի կարողացել որոշել, թե որն է բնագրայինը: Արդյունքում առաջարկվել է հետևյալ թարգմանությունը՝ «եղևների գագաթներին» (այսինքն՝ Լիբանանի մայրիների ամենաբարձր մասը), տես՝ հ. 16:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 104:18-23**

<sup>18</sup>Բարձր բլուրները այժմաների ապաստարանն են,

Իսկ վեճերը՝ նապաստակների:

<sup>19</sup>Եղանակների համար լուսինը սահմանեց,

Արեգակն իր մայր մտնելու ժամանակը գիտե:

<sup>20</sup>Խավար ես անում, ու գիշեր է լինում,

Որի մեջ անտառի բոլոր գագաններն են գաղտագողի շրջում:

<sup>21</sup>Առյուծների կորյունները մռնչում են հափշտակության համար

Ու Աստուծոց իրենց ուտելիքն են խնդրում:

<sup>22</sup>Երբ արեգակը ծագում է, միասին հավաքվում են

Ու պառկում են իրենց որջերում:

<sup>23</sup>Մարդը մինչև երեկո գնում է իր գործին

Ու իր ծառայությանը:

**104:18**

**NASB**

**NKJV, REB, TEV, JPSOA**

**NKJV ծանոթագրություն**

**NRSV, NJB, Peshitta**

**LXX**

«շեփանիմ»

«ժայռի փչակներ»

«ժայռի ճագար» (Ղևտ. 11:5)

«կոնիներ»

«նապաստակներ»

ՀԿ-ում նշված կենդանիները դժվար է տարբերակել, քանի որ՝

1. դրանց անունները տարբեր երկրներում տարբեր են
2. նույնիսկ միևնույն մշակույթի ներսում ունեն տարբեր անուններ

ՀԿ-ի բույսերի և կենդանիների մասին լավ, համառոտ քննարկման համար տես՝ UBS-ի *Աստվածաշնչի Ֆաունա և Ֆլորա* գիրքը:

**104:19 «Եղանակների համար լուսինը սահմանեց, արեգակն իր մայր մտնելու ժամանակը գիտե»** Սա արտացոլում է ստեղծագործության չորրորդ օրը և ցույց է տալիս մի կարևոր ճշմարտություն, որ Աստված է վերահսկում արևն ու լուսինը (տես՝ Ծննդ. 1:14-19), ինչպես նաև լույսը և խավարը (տես՝ Ծննդ. 1:3-5): Սա նման չէ ՀՄԱ-ի հաղթանակի մասին առասպելներին կամ լույսի և խավարի ուժերի միջև հակադրությանը, այլ ցույց է տալիս, որ Աստված է վերահսկում դրանց բոլորին: Սա շատ նշանակալի հայտարարություն է Բաբելոնյան աստղային երկրպագության



(ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՄՆԻ ՊԱՇՏԱՄՈՒԿՆԸ) և մերօրյա հորոսկոպների մասին առասպելների (տես՝ Սաղմ. 19:1-6) լույսի ներքո:

Լուսատուները (արևն ու լուսինը) տրվում են Ծննդ. 1:14-ում պաշտամունքի ժամերը նշանակելու համար (այսինքն՝ Շաբաթը, տարեկան տոնական օրերը, ծոմերը): Դրանք մարդկության երկրպագության ժամանակների ծառաներն են: Այս համատեքստում դրանք իրականում նկատի չունեն եղանակները, եթե միայն կապ չունեն՝

1. ՀՄԱ-ում չոր և թաց եղանակների հետ (տես՝ Սաղմ. 104:10-17)

2. տարբեր կենդանիների կերակրելու ժամանակների հետ (տես՝ Սաղմ. 104:20-23)

Աստված ստեղծեց և վերահսկում է լույսը և խավարը (տես՝ Սաղմ. 74:16, Ամովս 5:8): Դրանք աստվածներ չեն կամ հրեշտակներ, որոնք ազդում են մարդկային կյանքի վրա: Դրանք կարգուկանոնով ստեղծագործության ասպեկտներ են՝ իրենց կանոնավոր պտույտներով, որոնք նախատեսված են գործելու և հանգստանալու համար:

**104:20a** Այս տողն ունի երկու ԲԱՅ, որոնք երկուսն էլ ՀԱՅՑԱԿԱՆ հոլովով են (սակայն չեն թարգմանվել որպես ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ) որպես ստեղծագործության ժամանակ Աստծո անցյալում կատարած գործողություններ (տես՝ Ծննդ. 1:3-4):

**104:21-23** Չնայած այն կարծես թե ինչ որ տեղ տարօրինակ է առաջին հայացքից, սակայն այս համարները պարզապես հայտարարություն են, որ անտառի կենդանիները օգտագործում են գիշերային ժամանակը, որպեսզի հայթայթեն իրենց կերակուրը, իսկ մարդկությունը և այլ կենդանիներ օգտագործում են ցերեկային ժամերը, որպեսզի հավաքեն իրենց կերակուրը: Կարծես թե աստվածաբանական կիրարկումներ չկան, պարզապես հայտարարություն է այն մասին, թե ինչպես է ստեղծագործությունը իր հասանելի ժամանակը բաշխում, որպեսզի օգտագործի երկրի արդյունավետությունը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:24-26**  
**<sup>24</sup>Որքան բազմազան են Քո գործերը, ո՛վ ՏԵՐ,**  
**Դու այդ բոլորն իմաստությամբ արարեցիր .**  
**Երկիրը լեցուն է Քո ստեղծածներով,**  
**<sup>25</sup>Ինչպես այս մեծ ու լայն ծովը,**  
**Ուր անթիվ կենդանիներ են վխտում՝ մեծ ու փոքր:**  
**<sup>26</sup>Այնտեղով նավերն են անցնում,**  
**Ու Լևիաթանը, ում նրանց մեջ խաղալու համար ստեղծեցիր:**

**104:24** «Դու այդ բոլորն իմաստությամբ արարեցիր» Սա հնարավոր է Առակ. 8:22-31-ին ակնարկ է, որտեղ անձնավորված «իմաստությունը» ՅԱՀՎԵԻ գործակալն էր ստեղծագործության ժամանակ (տես՝ Առակ. 3:19):

❖ «Երկիրը լեցուն է Քո ստեղծածներով» Սա վերաբերում է կենդանի արարածներին, որոնք փթթում են երկրի վրա, բացառությամբ ջրային արարածների (Սաղմ. 104:25-26):

Այս տերմինը՝ «ստեղծածները» (BDB 889, KB 1114) մի քանի կերպ է թարգմանվում՝

1. NASB, NKJV, TEV, NJB, REB – ունեցվածք
2. NASB լուսանցք, NRSV – արարածներ
3. JPSOA – ստեղծվածներ
4. LXX – ձեռքբերումներ
5. KJV, Peshitta – հարստություններ
6. Knox – Քո ստեղծագործող գործությունը

MT տալիս է ԵԶԱԿԻ, սակայն հավանաբար սա հավաքական ԳՈՅԱԿԱՆ է:

**104:26 «Ու Լևիաթանը, ում նրանց մեջ խաղալու համար ստեղծեցիր»** Աստված խաղում է Իր ստեղծած կենդանիների հետ: Ուզարտական գրականության մեջ (այսինքն՝ Ռաս Շամրայի տեքստերում) ամենաբարձր աստվածը՝ *էլը*, խաղում է ծովահրեշի՝ *Լոթոնի* (եբրայերենում՝ *Լևիաթանի*) հետ: Ակնհայտ կապ է նկատվում ՀԿ-յան և Ուզարտական դիցաբանության (այսինքն՝ քանանացիների) այս նկարագրությունների միջև: Կարծում են ՀԿ-յան հեղինակները օգտագործում էին ՀՄԱ-ի պտղաբերության աստվածների հետ կապված քաջ հայտնի հասկացություններ, պատկերներ, պատմություններ, որպեսզի հաստատեն ՅԱՀՎԵԻ յուրահատկությունն ու մեծափառությունը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

«Լևիաթան» տերմինը (BDB 531) վերաբերում է մի հնագույն, մեծ ծովահրեշի, մինչ «Բեհեմոթ» (BDB 97, Հոր 40:15) տերմինը կարծես թե նկատի ունի հնագույն, մեծ ցամաքային հրեշի (տես՝ Սաղմ. 74:13,14, Հոր 3:8, 41:1, Եսայի 27:1): Լևիաթանի մասին ամբողջական գրառման համար տես՝ Եսայի 27:1:

Հրեական Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 1398) նշում է, որ որոշ գիտնականներ «Լևիաթան» տերմինը դիտարկում են իր իսկ բառացի իմաստով՝ «ուղեկցորդներ», որոնք դեֆիիններն են կամ նավերի մոտ հաճախ գտնվող մեծ ձկները:

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԼԵՎԻԱԹԱՆ

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:27-30**

**27Սրանք բոլորը Քեզ են սպասում,  
Որպեսզի իրենց ուտելիքը ժամանակին տաս:**  
**28Դու տալիս ես նրանց, ու նրանք հավաքում են:  
Բացում ես ձեռքդ, ու կշտանում են Քո բարիքով:**  
**29Երբ Քո երեսը ծածկում ես, տազնապում են,  
Երբ առնում ես նրանց շունչը,  
Մեռնում են իրենց հողն են վերադառնում:**  
**30Ուղարկում ես Հոգիդ, ու նրանք ստեղծվում են,  
Ու նորոգում ես երկրի դեմքը:**

**104:27-28 «Սրանք բոլորը Քեզ են սպասում»** Սա ցույց է տալիս Աստծո հոգատարությունը և շնչի մատակարարումը բոլոր իր արարածներին (տես՝ Ծննդ. 1:29-30, Կող. 1:17):

**104:29-30** Սա պարզապես փաստ է, որ հինը՝ ձերը մեռնում է (տես՝ Ծննդ. 3:19, Հոր 10:9, Սաղմ. 90:3) և նորերը ծնվում են, որպեսզի փոխարինեն հներին: Սա ակնհայտ ակնարկ է մարդկությանը, որ ստեղծվել է երկրի հողից և Աստված նրա ռունգերի մեջ կյանքի շունչն է փչել (տես՝ Ծննդ. 2:7):

Այնուհանդերձ, հետաքրքիր է, որ մարդը դառնում է *nephesh* (BDB 659) Ծննդ. 2:7-ում, որը նշանակում է «շնչի կյանք»: Այս *nephesh* տերմինը նաև կիրառվում է նկատի ունենալու Ծննդոցում առկա կենդանիներին (տես՝ Ծննդ. 1:24, 2:19):

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

❖ Ուշադրություն դարձրեք «հոգի» (այսինքն՝ «շունչ», BDB 924, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱԾՆՉՈՒԹՅՈՒՆ) բառի կրկնակի կիրառությանը:

1. մարդկային հոգին կամ կյանքի ուժը
2. Աստծո Հոգին (կամ Ծննդ. 2:7-ի «շունչը»)

ՀԿ-ում «Հոգին» ուժ է Աստծուց, որը իրականացնում է Նրա նպատակները (այսինքն՝ Ծննդ. 1:2), սակայն ՆԿ-ում այս հասկացությունը դառնում է անձնային:

### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՈԳՈՒ ԱՆՁԸ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 104:31-35**

<sup>31</sup>ՏԻՐՈՋ փառքը թող հավիտյան լինի .

ՏԵՐԸ թող ուրախանա Իր գործերի վրա:

<sup>32</sup>Նայում է երկրին, ու այն դողում է .

Գիպչում է լեռներին, ու դրանք ծխում են:

<sup>33</sup>ՏԻՐՈՋՆ եմ երգելու ամբողջ կյանքիս մեջ .

Աստծու փառքն եմ երգելու, քանի դեռ կամ:

<sup>34</sup>Նրա մասին իմ խորհրդածությունները քաղցր են լինելու:

Ես ՏԻՐՈՋՈՎ եմ ուրախանալու:

<sup>35</sup>Մեղավորները աշխարհից թող վերանան,

Ու ամբարիշտներ այլևս չգտնվեն նրա մեջ:

Օրհնի՛ր ՏԻՐՈՋԸ, ո՛վ իմ անձ:

Փառաբանեցե՛ք Աստծուն:

**104:31-32** Անգլերեն մի քանի թարգմանություններ Սաղմ. 104:31-32-ը դիտարկում են որպես առանձին պարբերություն (այսինքն՝ NKJV, TEV, NJB, REB): Սա անդրադարձ է ստեղծագործության յոթերորդ օրվան:

Այս համարներում առկա են երկու քերականական առանձնահատկություններ:

1. Սաղմ. 104:31 ունի երկու ՀԱՅՑԱԿԱՆ

ա. ՏԻՐՈՋ փառքը թող հավիտյան լինի – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 86:12, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՑԱՆ (*o'lam*)

բ. ՏԵՐԸ թող ուրախանա Իր գործերի վրա – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Ծննդ. 1:31, տես՝ Չոն Հ. Ուոլթնի *Ծննդոցի կորած աշխարհը մեկ . Հնագույն Տիեզերաբանություն*:

2. Սաղմ. 104:32 սկսում է «Նա ով. .» (ԴԵՐԲԱՅ), ինչը տեսնում ենք այս Սաղմոսի մեկնարկին (տես՝ Սաղմոս 104:1-ի գրառումը):

**104:32** Այս լեզուն կիրառվում է աստվածհայտնության համար: Ստույգ, թե ինչպես է սա համապատասխանում Ծննդոց 1-ի հետ, անհայտ է: Սա սովորաբար առնչվում է Անկումից հետո ընկած ժամանակի հետ, երբ մեղավոր աշխարհը ջղաձգված էր իր սուրբ Արարչի մոտեցումից:

**104:33-34** Անգլերեն մի քանի թարգմանություններ Սաղմ. 104:33-34 դիտարկում են որպես առանձին պարբերություն (այսինքն՝ NKJV, TEV, NJB, REB): Պատճառը՝

1. որ Սաղմ. 104:33-ն ունի երկու ԸՂՋԱԿԱՆ

2. Սաղմ. 104:34-35-ը ունի երկու *Qal* ԱՆԿԱՏԱՐ, որոնք կիրառված են ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (և ենթադրվում է երրորդը՝ Սաղմ. 104:35-ը):

Մեկը փառաբանելու է Աստծուն խոսքերով, մտքերով, և կյանքով կամ էլ սպառվելու է (BDB 1070, KB 1752) և ոչնչանա (այսինքն՝ Ծննդոց 3): Այն ինչ Աստված սկզբում ստեղծեց՝ վերականգնվելու է (համեմատեք Ծննդոց 1-2-ը Հայտնություն 21-22-ի հետ):

**104:35ա-բ** Այս Սաղմոսը նկարագրում է *Էլոհիմի* ստեղծագործությունը այնպես, ինչպես նախատեսված էր լինել (տես՝ Ծննդոց 1-2, այսինքն՝ առատ և խաղաղ) և թե ինչպես է այն նորից լինելու (տես՝ Հայտնություն 21-22, նոր Եղևմը, Նոր Երուսաղեմը):

**104:35գ-դ** Այս Սաղմոսի եզրափակումը համընկնում է Սաղմոս 103-ի կրկնակի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ հետ (երկու *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, «օրհնեցե՛ք»): Այստեղ՝

1. Օրհնի՛ր – BDB 138, KB 159, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. Փառաբանեցե՛ք – BDB 237, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 105:45, 106:48:

❖ «ՏԵՐ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ , Դ .

❖ «անձ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս են կապված Սաղմոս 103 և Սաղմոս 104-ը:
2. Ո՞րն է «ՅԱՀՎԵ» տերմինի կարևորությունը, որը թարգմանված է «ՏԵՐ» (բոլորը մեծատառերով) և *Էլոհիմ*, որը անգլերենում /հայերենում/ թարգմանված է «Աստված»:
3. Ինչպե՞ս է այս Սաղմոսը արտացոլում Ծննդոց 1-ը:
4. Ինչո՞ւ է այս Սաղմոսում հրեշտակների և մարդկանց ներկայությունը թերագնահատված, իսկ կենդանական աշխարհի կյանքը՝ մեծարված:
5. Ինչո՞ւ է Աստծո վերահսկողությունը լուսնի և արևի վրա այդքան կարևոր այս ՀՄԱ-յան համատեքստում:
6. Ինչպե՞ս է Սաղմ. 104:33-34 արտացոլում ՀԿ-յան ճշմարտությունների այլ կարևոր մասեր, որոնք այս և հաջորդ կյանքում Աստծո հոգատարության մասին են:
7. Բացատրե՛ք «ոչնչացման» արդի աստվածաբանական հասկացությունը: